

ՀԱՅԱՍՏ

ՅԱԻԵԼՈՒԱԾ
Ա. ՀԱՏՈՐՈՅ

ՄՈԼԻԵՌ

ԲՈՒՆԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

ԵՐԳԱԿԱՆՈՒՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ Ի ՄԻ ԱԲԱՐ

معارف نظارت جلیلمسنک ۹۵۵ تمره می رخصتنامه سیله طبع او نشدر



Կ. ՊՈՂԻՄ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Տ. ԳԱՎԱՖԵՍՆ

—
ԽԵԶԵ

(Մամլոյ ընկերուրեան կնիքը չկրող օրինակը
խարդախեալ են :)



Յ Ա. Ռ Ա. Զ Ա. Բ Ա. Ն

Մ Ո Լ Ի Է Պ

Մոլիէռ՝ եօթնեւտասաներորդ դարուն մէջ ծաղկած հեղինակ մ'է , առաջին կարգի կատակերգակ միանգամացն դերասան . արուեստին հըմուտ եղողներուն վկայութեամբը կըսեմք թէ՝ դեռ ոչ մէկը գերազանցեց կամ անոր հաւասարիլ կըրցաւ , վասնզի իւր երկերը ամեն ժամանակի յարմար են : Լուդովիկոս չորեքտասաներորդէն և անոր արքունիքէն յարգուած , Լավօնթէնի ու Պուալզի լարեկամ . ձեմարանին առաջարկութեամբը 1769 ին շատեր անոր Ներբողը շինեցին ու Շանֆօր առաւ մրցանակը : Նոյն ձեմարանը որ Մոլիէռն դերմտասան ըլլալուն համար իր անդամներուն թուոյն մէջ չէր կրցած ընդունիլ՝ 1778 ին իր ժողովոյ սրահին մէջ անոր կիսարձանը դրաւ Աորէնին սա վերնագրովը .

Անոր փառքին բան չի պակսիր ,
Մեր փառքին պակասն ան եր :

Ի Փարիզ (Յունվար 1844) ՈՒՀԱԿԸ ՎՈՂՈՍը բնակած տանը տեղւոյն վրայ Մոլիէրի պատւոյն յիշատակարան մը կանգնուեցաւ :


Մոլիէռ. Փուրսօնեաքն յօրինեց 1669 ին և հետզհետէ ուրիշ կատակերգութիւններ , որոց մէկ քանին արդէն ի Հայ թարգմանուած և հրատարակուած են . բայց մինչեւ ցարդ չհրատարակեալ-

ներուն կարգէն եղող ներկայ ԲՌՆԻ ԱՄՈՒՄՆՈՒ-
ԹԻՒՆԸ ՀՆՉԱԿԻ Առաջին հատորին յաւելուածն
ընել որոշեցինք :

Սոյն կատակերգութիւնը թէև Հայ թատերա-
բեմին վրայ շատ անդամներ ներկայացուելով հան-
գիսականաց գոհունակութեան և բուռն ծափա-
հարութեանցը արժանացած է, բայց պէտք էր
նաեւ հրատարակուէր, վասնզի, իւր ներկայացումը
տեսնողներուն նման՝ ընթերցողքն ալ կրնան զուար-
ճանալ և օգուտ քաղել անկէ :

Ահա այս մտածմամբ կը հրատարակեմք զի՞ւնի
Ամուսնութիւն :

Տ. Գ. Փ.



Ա.ՆՉԻՆՔ

Ծերուն	Տօրիձային նշանածը .
Գերոնիմոս	Ծերունին բարեկամը .
Տօրիձան	Անդիմոսին աղջիկը և Ծերունին նշանածը .
Անդիմոս	Տօրիձային հայրը .
Կոմիտաս	Տօրիձային եղբայրը .
Ռուբենիկ	Տօրիձային սիրահարը .
Փառնակ	Պատուելի Արիստոտելեան .
Մանկասար	Պատուելի Պիւռօնեան .
Երկու գնչուք	



ՄՈԼԻԵՐ

ԲՌԱՆԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

(Տեսարանն է Հրապարակ)

ՏԵՍԻԼ Ա.
ԾԵՐՈՒՆ (Առանձին)

ԾԵՐՈՒՆ . — (Տաղ Քջ Եղողներուն իօսելով) Ես
հիմա կուգամ, վեր վար աղէկ նայեցէք որ ան-
կարգ բան մը չպատահի, թէոր ստակ բերե-
լու ըլլան՝ շուտ մը եկէք պարոն Գերոնիմոսին
տունը իմաց տուէք ինծի, թէոր ստակ ուզե-
լու դայ մէկը՝ ըսէք որ դուրս ելայ և մինչեւ
իրիկուն չպիտի դամ:

ՏԵՍԻԼ Բ.
ԾԵՐՈՒՆ ԵՒ ԳԵՐՈՆԻՄՈՍ

ԳԵՐ . — (Ծերունին վերջն իօսելով ըստ ըլլան) Ի՞նչ խելացի հրամաններ կուտայ :

ԾԵՐ . — Օ՛, օ՛, պարոն Գերոնիմոս, ա-
ղէկ որ եկար, ես ալ քեզի պիտի դայի :

ԳԵՐ . — Ի՞նչ կայ, խե՞ր է :

ԾԵՐ . — Դործ մը դըեր էի միոքս՝ անի-
կայ քեզի պիտի բանայի, և աղաչէի որ ա-
նոր վրայ ունեցած կարծիքդ յայտնես ինծի :

ԳԵՐ · — Շատ աղեկ , ուրեմն աղեկ որ ե-
կեր եմ , հոս ուզածնուդ պէս ազատ կրնաք
խօսիլ :

ԾԵՐ · — Կաղաչեմ , լաւ մտիկ ըրէ , ինծի
կարեւոր բան մը առաջարկեցին , զոր առանց
բարեկամներու խորհուրդ հարցնելու պէտք
չէ գործադրել :

ԳԵՐ · — Շատ շնորհակալ եմ որ ինծի որո-
շեր ես այս խորհուրդը բանալու . ի՞նչ է նա-
յինք :

ԾԵՐ · — Բայց նախ կաղաչեմ որ ամենե-
ւին շողոքորդութիւն չընես , մոքիդ եկածը
շտկէ շիտակ զրուցես ինծի :

ԳԵՐ · — Դուն ատանկ ուզելէդ ետքը՝ ինծի
աւելի աղեկ :

ԾԵՐ · — Շատ դժար դալու բան է երբ
բարեկամ մը իր բարեկամին շտկէ շիտակ խոր-
հուրդ չիտար :

ԳԵՐ · — Իրաւունք ունիս :

ԾԵՐ · — Այս ժամանակին մէջ անկեղծ բա-
րեկամ խիստ քիչ կը դտնուի :

ԳԵՐ · — Ճշմարիտ է :

ԾԵՐ · — Դուն հիմա կը խոստանա՞ս բոլո-
րովին շիտակ զուրցելու :

ԳԵՐ · — Այո՛ , կը խոստանամ .

ԾԵՐ · — Հաւատքիդ վրայ երդում ըրէ :

ԳԵՐ · — Այո՛ կերդնում մեր բարեկամու-

թեանը վրայ որ շիտակը զրուցեմ, դուն գործդդ
ըսէ նայինք :

ԾԵՐ · — ՔԵԿի ըսելիքս սա է որ՝ կարգուե-
լու ըլլամնէ՝ աղէկ կըլլայ արդեօք :

ԳԵՐ · — Ո՞վ · դժուն :

ԾԵՐ · — Այո՛, ես, է ի՞նչ կըսես ասոր :

ԳԵՐ · — Բայց նախ պէտք է որ բան մը
ըսես ինձի :

ԾԵՐ · — Ի՞նչ պիտի ըսեմ.

ԳԵՐ · Քանի՞ տարու ես :

ԾԵՐ · — Ո՞վ · ե՞ս : իրաւոր չիյտեմ, բայց
սա գիտեմ որ ուժս տեղն է :

ԳԵՐ · — Տէր ողորմեա, քիչ շատ քանի
տարու ըլլալդ չե՞ս գիտեր :

ԾԵՐ · — Զէ, ո՞վ միտքը պիտի պահէ :

ԳԵՐ · — Կայնէ ես հիմա կը գտնամ, մենք
իրար ճանչցանք նէ քանի՞ տարու էիր :

ԾԵՐ · — Քսան տարու, քսանէն եւել չկայի :

ԳԵՐ · — Քանի՞ տարի հետդ իտալիա կեցանք:

ԾԵՐ · — Եօթը տարի :

ԳԵՐ · — Զմիւռնիոյ մէջ ո՞րչափ կեցանք :

ԾԵՐ · — Ինը տարի :

ԳԵՐ · — Ոնկէ դուն լէն գայիք նէ՝ հոն
քանի՞ տարի կեցար :

ԾԵՐ · — Տասնըմէկ տարի ալ հոն :

ԳԵՐ · — Քանի՞ տարի է որ հոս ես :

ԾԵՐ · — 56 ին էր հոս եկայ :

ԳԵՐ · — 56 ԷՆ մինչեւ 65 ինը տարի կընէ կարծեմ, տասնըմէկ տարի լիոն կեցեր ես՝ կընէ քսան տարի, ինը տարի Զմիւռնիա՝ կընէ 29ը . Եօթը տարի ալ իտալիա՝ եղաւ 36, քսան տարու էիր երբ մենք մէկդմէկ ճանչյանք՝ եղաւ 56. ըսել է որ Պարոն Ծերուն քու խօսքովդ լման 56 տարու ես հիմա :

ԾԵՐ · — Ի՞նչ կըսես ախալար, չկընար ըլլալ :

ԳԵՐ · — Տէր սղորմեա, ահա ճիշդ հաշիւը ցըցուցի քեզի, և որովհետեւ ինէ խօսք առիր որ բարեկամաբար ճշմարիտը պիտի զուրցէի՝ գիտցած ըլլաս որ կարգըլիլը քու բանդ չէ, երիտասարդներն անդամ կարգուենէն առաջ պէտք է որ աղէկ մը մոտածեն, իսկ քու տարիքդ մարդիկները մոռքերնուն անդամ անցունելու չեն : Աղէկ ըսեր են որ Ամուսնութիւնը խենդութիւն է, քու տարիքիդ խելացութիւն կը վայէ, խենդութիւն չվայլեր . վերջապէս իմ կարծիքս շոկէ շխտակ զուրցեմ քեզի, պէտք է որ ատ բամագալը ականջէդ հանես, ի՞նչ արտառոց մարդ կ'ըլլաս երբ մինչեւ հիմա աղատ ապրելէդ ետքը առ տարիքիդ ելլաս էն ծանը շղթան ճիտդ անցունես :

ԾԵՐ · — Ես ալ քեզի բան մը ըսե՞մ, ան է որ պիտի կարգուիմ, և իմ ուղած աղջիկս առնելու ըլլամ նէ՝ ամեննեւին արտառոց բան մը ըրած չեմ ըլլար :

ԳԵՐ · — ԱՅՍ Ուրիշ , աստիկայ չըսիր ինծի :
 ԾԵՐ · — ԱՌ ըսած աղջիկս շատ սիրուն է ,
 և բոլոր սրտովմ կը սիրեմ զանիկայ :
 ԳԵՐ · — Իրա՞ւ , սրտանց կը սիրե՞ս :
 ԾԵՐ · — ԱՌՈՒ . հօրմէն ալ ուղեցի զինքը :
 ԳԵՐ · — Ուղեցիր մի՛ :
 ԾԵՐ · — Հա՞պա , և այս գիշեր ալ պիտի
 պսակուիմ լմնցունեմ :
 ԳԵՐ · ԷՇ անանկ է նէ՝ կարդուէ , ալ ըսե-
 լիք չունիմ :

ԾԵՐ · — ԻՇՆՀ . մտքիս դրածը ե՞տ պիտի
 առնէի պարոն Գերոնիմոս , դուն կը կարծես
 որ ես բաւական կոկիկ մարդ չե՞մ կնիկ մ'առ-
 նելու համար , տարիքէն իՇՆՀ կելլայ եղեր ,
 մենք գործը նայինք , . . . ունի՞ս մի երեսուն
 տարեկան մարդ մը՝ որ ինծի պէս կայտառ և
 ուժով ըլլայ , նայէ՛ ակռաներուս ամենն ալ
 դրած են , (Ակռաները ցուցնէ) օրը չորս անգամ
 կերակուր կուտաեմ և շատ աղէկ ալ կը մար-
 սեմ , հէ՛մ , հէ՛մ , հէ՛մ , հէ՛ , (կը հաղա) ասոր
 ըսելիք ունի՞ս մի :

ԳԵՐ · — Իրաւունք ունիս . սխալեր եմ եղեր .
 շատ աղէկ կընես թէոր կարգուելու ըլլաս :

ԾԵՐ · — Ո՞ւր թողունք որ , սիրուն և գե-
 ղեցիկ կնիկ մը պիտի ունենամ , որ ինծի շոյէ
 փայփայէ , հաղար գգուանք պիտի ընէ ու ա-
 մեն հոգ պիտի ունենայ ինծի համար : Ասկէ

զատ՝ կը մոտածեմ որ չկարգուելու ըլլամ նէ՝ Ծերունեան դերգաստանը պիտի հասնի փճանայ, իսկ ընդհակառակը կարգուելու որ ըլլամ՝ ինձի պէսեր պիտի ելլան ինէ, որ երկու ջուրի կաթիլ իրարու ինտոր կը նմանին նէ՝ անոնք ալ ինձի անանկ պիտի նմանին։ Տանը մէջ պիտի վաղեն վազվուտեն, պօռան պօռչտեն, իրիկունները շուկայէն դարձած ատենս ինձի հայրիկ, հայրիկ պիտի կանչեն, հազար ու մէկ խենդուխելառ բաներ պիտի ըսեն ինձի։ Կարծես թէ արդէն կարդուեր եմ և կէս տուզինա ալ զաւակներ չորս կողման շարուեր են։ ո՞հ ի՞նչ ուրախութիւն։

ԳԵՐ. — Ատկէ զուարճալի բան չկայ, նայէ որ ժամ մը առաջ կարգուիս։

ԾԵՐ. — Բարեմոտութեամբ կը զրուցես։

ԳԵՐ. — Անտարակոյս, ատկէ աղէկ բան չես կրնար ընել։

ԾԵՐ. — Ճշմարիտը շատ ուրախ եմ, որ բարեկամաբար ադ խորհուրդը տուիր ինձի։

ԳԵՐ. — Աղէկ ա՛, առնելիքդ ո՞լ է։

ԾԵՐ. — Տօրիծան։

ԳԵՐ. — Վայ, այն գեղեցիկ, այն աննման Տօրիծան, Անդիմոսին աղջիկը չէ մի ըսածդ։

ԾԵՐ. — Ճիշդ, դլխուն զարկիր։

ԳԵՐ. — Սա կոմիտաս է ի՞նչ է, անոր քոյրը որ սուր ալ կախէ մէջքը։

ԾԵՐ · — ԱՅ, ան , Էյ ինչ կըսես :

ԳԵՐ · — Շիտակը աղէկ կտոր է , Աստուած կատարին հասցունէ :

ԾԵՐ · — Եյ հրամանիք ալ հարսնիք պիտի հրամմես ա :

ԳԵՐ · — Պլխուս վրայ ամենայն սիրով :

ԾԵՐ · — Ծառայ եմ :

ԳԵՐ · — Ծառայ Բարձրելոյն . (ՄԵԼՈՆԵ) Տօրիձան . պարոն Անդիմոսին այն գեղեցիկ աղջիկը սա խըռֆած Ծերունին , սա 56 տարու մարդուն հետ պիտի կարգուի հէ . հա , հա , հա , հա . աս ինչ հարսնիք . աս ինչ հարկինք : (ԿԵՐԵՆԵԼ ԿԵՐԵՆԵ) :

ՏԵՍԻԼ Գ.

ԾԵՐՈՒՆ (ՄԵԼՈՆԱԿ)

Սա ամուսնութիւնը գէշ պիտի չըլլայ , որովհետեւ ամենուն ուրախութեան պատճառ եղաւ . և լսողը կը խնդայ կոր . ասկէ աւելի փառք չկրնար ըլլալ ինծի համար :

ՏԵՍԻԼ Գ.

ՏՕՐԻՉԱՆ ԵՒ ԾԵՐՈՒՆ

ՏՕՐԻ · — (Պլոք ողայ հը եղին յբաժ ուսուրան նը մոնէ) Հագուստս վեր բռնէ , գետինը չքսուի . կատակ պէտք չէ :

ԾԵՐ · — (ՀԵԼՈՆԻՆ ՏՕՐԵՅԱՆ ՈՒՍՆԵԼՈՂ) Ահա իմ

նօնօշս կուգայ կոր , տեսէք ի՞նչ դեղեցիկ է ,
ի՞նչ հասակ , ի՞նչ շարժուածք . մարդ ասանկ
աղջիկ մը տեսնելէն ետքը ինտո՞ր չկարգուի :
(Տօբէյացէն) Ո՞ւր կ'երթաս կոր բամբիշս , քու
փեսացուիդ հարսնցուն :

ՏՕՐ · — Քանի մը բան պիտի գնեմ :

ԾԵՐ · — Ահա սիրելիս եկաւ ժամանակը
որ մենք իրարմով երջանիկ պիտի ըլլանք .
կարծեմ թէ բոլորովին գոհ պիտի ըլլաս ինէ ,
ալ առկէ ետքը առանց արգելքի ուզածնիս
պիտի կրնանք ընել , գլխէդ մինչեւ սաքդ իւ-
մինս պիտի ըլլաս : Փայլուն աչքերուդ , ու-
կեթել մազերուդ , կըրիկ բերնիդ , կարմիր
պրկունքներուդ , մանարտիկ ականջներուդ ,
վերջապէս բոլոր քու անձիդ տէրը ես պիտի
ըլլամ , գուն ալ գոհ չես մի զիս առնելուդ
համար , անուշիկ նօնօշիկս :

ՏՕՐ · — Ի՞նչ ըսել է , շատ գոհ . մինչեւ
հիմա հօրս գերի էի , որչափ կը փափաքէի
որ զիս կարգէր , որպէս զի աղատիմ իր լու-
ծէն և ուզածս ընելու կարող ըլլամ : Փառք
Աստուծոյ , աղէկ հանդիպեցար , ասկէ ետքը
աղէկ պիտի զբօսնում . գուն ալ բարի մարդ
մ'ես , ան էրիկներուն պէս չես որ կնիկներնին
իրենց համար պահել կ'ուզեն , շիտակը ատի-
կայ իմ բանիս չգար , առանձնութիւն չեմ
սիրեր , կ'ուզեմ որ միշտ անոր ասոր հետ

տեսնուիմ, պտըտիմ զրւարձանամ։ կարծեմ
թէ հրամանքդ ալ իմ բնութեամբս կնիկ մը
առնելուդ շատ ուրախ պիտի ըլլաս, ամենե-
ւին կոիւ չըլլար մէջերնիս։ ես քու գործիդ-
շեմ խառնուիր, դուն ալ իմ գործիս չես
խառնուիր, անանկ չէ։ բայց ինչ եղար, ե-
րեսիդ գոյնը նետեց։

ԾԵՐ · — Գլխուս ցաւ մը մնաւ։

ՏՕՐ · — Այս օրերս շատերուն կը պատահի
ատիկայ, բայց վեաս չունի, կարգուինք նէ
ամեն բան կ'անցնի. մնաս բարով, նայէ վրաս
գլուխս հին է, պիտի երթամ հագուստ գնե-
լու, ցուցակն ալքեզի կը դրկեմ, դուն խա-
նութպաններուն վճարէ։

ՏԵՍԻԼ Ե.

ԳԵՐՈՆԻՄՈՍ, ԾԵՐՈՒՆ

ԳԵՐ · — Պարո՞ն Ծերուն, ուրախ եմ որ նո-
րէն քեզ հոս գտայ, ոսկերիչ մը հանդիպե-
ցաւ հիմա, որ լսելով թէ հարսիդ բոլանթի
մատնի մը ընծայ պիտի տաս՝ ինծի աղաչեց
որ հրամանոցդ ըսեմ թէ՝ ինքը աղէկ մատնի
մը ունի ծախելու։

ԾԵՐ · — Հիմա արտօրալու բան չունիմ։

ԳԵՐ · — Տէր ողորմեա, ատ ինչ խօսք է,
քիչ մը առաջ կարտօրայիր կոր նէ։

ԾԵՐ · — Աղէկ, բայց ես կամաց կամաց

միտքս կը փոխեմ կոր , կէս ճամբէն ետ դառնալը աւելի գիւրին է : Այս գիշեր երազ մը տեսայ , մտքէս ալ չելեր , և որովհետեւ երազները հայլիի կը նմանին . ուր մարդ իր ինչ ըլլալիքը առաջուց կը տեսնէ մէջը , պէտք է որ ես ալ այն երազին մեկնութիւնը իմանամ : Երազիս մէջ տեսայ որ նաւ մը նստեր էի , ծովը շատ կալեկօծէր կոր . մէյ մ' ալ . . .

ԳԵՐ . — Պ. Ծերուն . ժողովութիւն կընես , ես քիչ մը դործ ունիմ , քեզ մոտիկ չեմ կրնար ընել , երաղէ ալ ամենեւին չեմ հասկնար , ամուսնութեան կտորին համար ալ երկու դիտուն փիլիսոփայ դրացի ունիս , անոնք պէտք եղածը կրնան զուրցել քեղի այս նիւթին վրայ և զքեզ դոհ ընել , իսկ ես իմ առջի զուրցածներու վրայ միշտ հասաատ մնալով , մնամ խորին ծերութեանդ խոնարհ ծառայ (ՄԵՒՆ) :

ԾԵՐ . — (ՄԵՒՆ) Պարոն Գերոնիմոսն իրաւունք ունի , պէտք է որ երթամ սա մարդիկը դտնեմ ու անոնց խորհուրդ հարցնեմ :

ՏԵՍԻԼ Զ.

ՓԱՌՆԱԿ , ԾԵՐՈՒՆ

ՓԱՌ . — (Եկած ուղը դառնալը և ԾԵՐՈՒՆը Նույնը) կորսուէ՛ լի՞րը , տգէտ , տգիտացուցիչ , տգիտացեալ . ե՛րթ ընդ հետս իմ , բարեկամ , ստահակ ոմն ես դու , այր անտեղեակ վար-

ժից արտաքսելի ի սահմանաց հասարակապե-
տութեան դպրութեանց :

ԾԵՐ . — ԱՀԱ սւզածիս մէկը գտայ :

ՓԱՌ . — (ՆՍՅԱԿԻՆ) Այս՝ զօրաւոր ապացու-
յութեամբք հաստատեցից քեզ յ'Արիստուտելէ
բերից քեզ զվկայութիւն 'ի փիլիսոփոյէն փի-
լիսոփայից , զի տգէտ ոմն ես դու , տգիտա-
գունից տգիտագունեղ , տգիտազեղեալ , տգի-
տազինող , ամենայն հոլովիւք անուանց և խո-
նարհմամբք բայից :

ԾԵՐ . — (ՄԵԼԻՔԵՆ) Մէկուն հետ կռիւ ունի .
(ՓԱՌԱԿԻՆ) Պարոն պատուելի :

ՓԱՌ . — (ՆՍՅԱԿԻՆ) Նախադասութիւնդ այդ-
դատապարտելի է ընդ ամենոցն ոլորտս փիլի-
սոփայութեան :

ԾԵՐ . — (ՄԵԼԻՔԵՆ) Շատ սրդողցուցած պի-
տի ըլլան այս մարդը . (ՓԱՌԱԿԻՆ) Ճեռքդ եմ
պադեր պարոն պատուելի :

ՓԱՌ . — (ԴԱՎԻԴԱՅԵՆ) Ծառայ եմ :

ԾԵՐ . — Կարելի է :

ՓԱՌ . — (ԵՍՖ ԹԵՂ ԴԱՎԻԴԱՅԵՆ) Գիտիցես ար-
դեօք , որպիսի՞ յանցոնաց մեղապարտ ես ,
հնարել զբառս և եղծել զկանոնս ամպարշտիս :

ԾԵՐ . — Ե՞ս

ՓԱՌ . — Զզուելի են տարագք խօսիցդ , ան-
տանելի արտասանութիւնդ , և նորասիրու-
թիւնդ 'ի դրէական յանցանս գրեսցին քեզ :

ԵԵՐ · —ԵՍ ՔԵՊԻ · · ·

ՓԱՌ · —ՀԱՃՈՂ ԵՎԱ Է ԲՆԾ ՍԱՄԱԿԵԼ ՔԱՆ
ԸՆԴ-ՈՒՆԻԼ ՊԱՍԱՋԵԱԼՂ , ՊԿԱՐԾԻՍ ԻՄ ՀԱՍՏԱ-
ՄԵԳԻԳ ՄԻՆՉԵւ ՍՎԵՐԺԻՆ ՀԻԾ ՄԵԼԱՆԻ ԻՄՈՅ :

ԵԵՐ · —ԵՍ · · ·

ՓԱՌ · —Ա. յ՛ , աղդք և աղինք անցցեն և
բանք Արխտուտելի մի անցանիցեն :

ԵԵՐ · —Պարոն Արխտուտել , կրնաք մի ի-
մանալ ձեր բարկութեան պատճառը :

ՓԱՌ · —ԱՆԿԷ ԻՐԱւացի բան չկրնար ըլլալ
աշխարհիս վրայ :

ԵԵՐ · —Ի՞ՆՉ Է , ըսէք :

ՓԱՌ · —ՏԳԵՄԻՆ մէկը առջեւս սխալ նա-
խադ-ասութիւն մը ըրաւ . սոսկալի , զարհու-
թելի , քստմնելի նախադ-ասութիւն մը :

ԵԵՐ · —ԿՐՆԱՔ մի իմանալ , ի՞նչ է :

ՓԱՌ · —Ո՛հ Պարոն ԾԵՐՈՒՆ , ամեն բան
տակնուվերայ եղած է , այս ժամանակիս մէջ
աշխարհ.ք ընդհանուր ապականութեան մը
մէջ ընկած է . զարհութելի լրբութիւն մը ա-
զատութիւն մը ամենուրեք կը թագաւորէ :

ԵԵՐ · —Ի՞ՆՉ Է ՆԱՅԻՆՔ :

ՓԱՌ · —ՍՈՍԿԱԼԻ բան չէ մի որ մարդ ել-
է բազմութեան մէջ գլխարկին ձեւը ըսելու
տեղ գլխարկին տեսակը ըսէ :

ԵԵՐ · —Ի՞ՆՉ ըսէ ըսիր :

ՓԱՌ · —ԵՍ կը պնդեմ որ գլխարկին ձեւը

պէտք է ըսել և ոչ տեսակը . (Նորեն Եղան Դեպ
դառնալը) Այս , տգէտ տգիտացուցիչ տգի-
տացեալ դու , ասանկ պէտք է ըսել , և ա-
սոնք նոյն իսկ Արիստոտելի գործածած բա-
ռերն են , որ հայր Եղաւ գրականութեան :

ԾԵՐ · — (ՄԵԽԱԿԻ) Ես ալ կարծեցի թէ աշ-
խարհ.ք կործաներ է . (Փառաւակն) Պարոն Պատ-
ուելի , մէկդի ձգէ ատոնք և ինձ մտիկ ըրէ :

ՓԱՌ · — Զայրոյթէս ինչ ընելս չգիտեմ :

ԾԵՐ · — Հանգիստ թող սա գլխարկները .
բան մը ունիմ քեզի զուրցելիք :

ՓԱՌ · — Ապերախտը :

ԾԵՐ · — Աստուածդ սիրես իս նայէ :

ՓԱՌ · — Անկիրթը , ինձի անանկ բառ մ'ըսել :

ԾԵՐ · — Ապուր է կերեր :

ՓԱՌ · — Բառ մը որ նախնիք չէին գործածեր :

ԾԵՐ · — Իրաւունք ունիս . (Փառաւակն Եղան
Դեպ դառնալը) Այս , յիմար տիմար մ'ես դու
որ գրող կարդացող պատուելիի մը հետ վի-
ճել կ'ուզես . (Փառաւակն) Ահա լմացաւ , հիմա
կ'աղաչեմ իս մտիկ ըրէ . Ես մէկ կնիկ մը պի-
տի առնեմ որ տանս մէջ ինձի ընկեր ըլլայ .
շատ ազւոր ու կոկիկ է . սիրտս սիրեց զինքը ,
ինքն ալ կը խենդենայ կոր ինձի հետ կար-
դուելու համար . հայրը կուտայ կոր , բայց ես
կը վախնամ կոր քիչ մը , գիտես ա ինչու
համար . հրամանքդ մէկ պատուելի մը ըլլա-

լուդ կաղաչեմ որ կարծիքդ ըսես ինծի :
ՓԱՌ . — Աւելի կ'ախորժիմ անբան անաշ-
ոռն մը ըլլալ քան թէ այդ խօսքին հաւանիլ :
ԾԵՐ . — (ՄԷԿ.) կրօզը տանի քեզ մարդ , (Բ. Պ. Տ.)
ի՛յ զ. Պատուելի , քիչ մ'ալ մարդ մտիկ կ'ընեն ,
Ժամ մ'է կը խօսիմ , պատասխան չես տար :

ՓԱՌ . — Թողութիւն ըրէ ք . իրաւացի սըրտ-
մտութիւն մը ջիղերս ու միտքս իրար անցուց :
ԾԵՐ . — իս մտիկ ըրէ մարդ , բանի մը
վրայ պիտի խօսիմ քեզի հետ :

ՓԱՌ . — Ի՞նչ լեզուով պիտի խօսիս հետս :
ԾԵՐ . — Ի՞նչ լեզուով մի՞ , բերնիս մէջ ե-
ղած լեզուովը , դրացինիս լեզուն փոխ չպի-
տի առնեմ ա :

ՓԱՌ . — Բայց ո՞ր աղգին լեզուովը : Խտալերէն :

ԾԵՐ . — ԶԷ :

ՓԱՌ . — Գերմաներէն թէ Անդղիերէն :

ԾԵՐ . — ԶԷ , չԷ :

ՓԱՌ . — Յուանսերէն թէ Լատիներէն :

ԾԵՐ . — ԶԷ :

ՓԱՌ . — Հելլեներէն թէ Եփրայեցերէն .

ԾԵՐ . — ԶԷ ըսինք եղբայր , չԷ :

ՓԱՌ . — Գրաբան . թէ . . .

ԾԵՐ . — ԶԷ , չԷ , չԷ , աշխարհաբառ :

ՓԱՌ . — Ուրեմն աջ կողմն տնցիր , վամն զի
ձախ ականջս գիտնական լեզուներու համար
պահուած է , իսկ աջը ուամկական ու մայրե-

նի լեզուին համար :

ԾԵՐ · — Դժուար բանի մը համար խորհուրդ պիտի հարցնեմ հրամանոյդ :

ՓԱՌ · — Արդեօք վկվիսովայական դժուարութիւն մ'է հարցնելիքդ · Թերեւս կ'ուղես իմանալ թէ գոյութիւն ու պատահմունք էակին նայելով համանշանակ են թէ երկրայական :

ԾԵՐ · — Ամենեւին ատանկ բան չէ :

ՓԱՌ · — Թէ տրամաբանութիւնը արհեստ է թէ գիտութիւն :

ԾԵՐ · — Ոչ երբէք, այդ ալ չէ :

ՓԱՌ · — Թէ միտքն երեք գործողութիւններուն վրայ կը ճառէ թէ երկրորդին միայն :

ԾԵՐ · — Չէ, չէ, չէ :

ՓԱՌ · — Ուրեմն միտքդ բացատրէ :

ԾԵՐ · — Քեզի ըսելիքս սա է որ առոյգ և գեղեցիկ աղջկան մը հետ կարգուելու միտք ունիմ, բայց կը վախնամ կոր :

ՓԱՌ · — Խօսքը մարդուս տրված է որ իր մտածութիւնները յայտնէ, և ինչպէս մտածութիւնք նկարագիրք են իրաց՝ նոյնպէս և խօսքք նկարագիրք են մտածութեանց · (Ծերունին համբերութիւնը հարսնելով՝ +անի ճը անդամ յեւ+ովք Փառականին բերանը է ժողէ, որ վեցուցածին պէս նորէն է շրբանակէ) Այլ այս նկարագիրները անով կը տարբերին միւս նկարագիրներէն, որ միւս նկարագիրները իրենց նախագիծերէն

որոշված են ամեն տեղ . իսկ խօսքը եր մէջը
կը պարունակէ իր նախագիծը , որովհետեւ
ուրիշ բան չէ բայց եթէ նոյն իսկ մտածու-
թիւնն է արտաքին նշանով մը յայտնուած .
ուրեմն խօսքով զրուցէ քու մտածութիւնդ .
որովհետեւ խօսքը նշաններուն մէջ էն հաս-
կընալի նշանն է . (Ծերուն զայ ներ իւ հրէ և դուռը
իւ էոց որ դուռը չելէ . Փառական առանք Քջէն) Այս ,
խօսքը սրտին թարգմանն է , խօսքը հոգւոյն
պատկերն է . (Պատրուհանէն իւ շարունակէ) Խօսքը
հայելի մ'է որ մարդոց գաղտնիքները պարզ
կերպով կը ներկայացնէ , և որովհետեւ դու
մտածելու և խօսելու կարողութիւնը երկուքը
մէկանց ունիս , ինչո՞ւ համար քու մտածութիւնդ
ինձի հասկցնելու համար խօսք չես գործածեր :

ԾԵՐ . — Ես ալ անանկ պիտի ընեմ , բայց
մտիկ չես ըներ կոր :

ՓԱՌ . — ԱՀԱ կ'ընեմ , խօսէ :

ԾԵՐ . — Ուստի Պ . պատուելի , կ'ըսեմ որ ...

ՓԱՌ . — Սակայն կարճ ըրէ . լակոնական ո-
ճով խօսէ ինձի հետ :

ԾԵՐ . — Շատ աղէկ , ես ձեզի

ՓԱՌ . — Մէջէ մէջ պտոյտ խօսեր պէտք
չեն : (Ծերուն իւ բարեկանայ՝ ժեդնէն +որ կառնէ) :

ՓԱՌ . — Այդ Բնչ է , միտքդ բացատրելու
տեղ սիրտդ կը նեղանայ , սա անդդամը նա-
յեցէք , հանրապետութիւն ըսող մարդէն ալ

աներես է եղեր ա . և ես ամենուրեք պիտի
հաստատեմ քեզի ցուցիչ և համոզիչ փաս-
տիւք և գերադրական ապացուցութեամբք ,
թէ դու անբան մ'ես , և անբան պիտի մնաս ,
իսկ ես եմ և պիտի ըլլամ միշտ և հանապազ
պերճիմաստ ֆառնակ Արիստոտելեան :

ԾԵՐ · —Ա.ՅՄ ի՞նչ շատախօս մարդ է եղեր :

ՓԱՌ · —(ՏԵՇԱՐԴԱՆ ՀՊԱՀՆ) Ա.ՅՐ դրագէտ:

ԾԵՐ · —Նորէն եկար . . .

ՓԱՌ · —Ա.ՅՐ կարող ամենայնի . այր տա-
ղանդաւոր , (ԵՐԵՄԱԾՆ) այր լի ամենայն դիտու-
թեամբ բնական , բարոյական և քաղաքա-
կան . (ՀՊԱՀՆ) այր դիտուն դիտնագունից , ա-
մենայն հոլովիւք անուանց և խոնարհմամբք
բայից . (ԵՐԵՄԱԾՆ) այր՝ որ գիտէ զգերադրա-
կան , զառակ , զդիցաբանութիւն , և զպատ-
մութիւն . (ՀՊԱՀՆ) քերականութիւն , բանաս-
տեղծութիւն , ճարտասանութիւն և տրամա-
բանութիւն . (ԵՐԵՄԱԾՆ) ուսողական դիտութիւն,
թուաբանութիւն , երկրաչափութիւն , եռան-
կիւնաչափութիւն , փիւսկեան գիտութիւն և
քիմիական գիտութիւն , (ՀՊԱՀՆ) տիեզերա-
գրութիւն , աշխարհագրութիւն , ճարտարա-
պետութիւն . (ԵՐԵՄԱԾՆ) բժշկութիւն , աստղա-
դիտութիւն , դիմադժութիւն , ճակատագի-
տութիւն , ձեռնահմայութիւն , գետնակո-
չութիւն այլովքն հանդերձ (ԴԻՒՔ) :

ԵԵՐ · — (ՄԻԱՅ) կրողը տանի ատանկ գիտունները որ մարդ մաիկ ընել չեն ուզեր , աշղէկ ըսեր էին ինձի որ իր վարպետը Արիստոտել շատ զրուց մարդուն մէկն էր : Երթամ մէկալը գտնեմ , ան աւելի խելօք է : Ո՞վ կայ հոն :

ՏԵՍԻԼ Ե.

ՄԱՆԿԱՍԱՐ , ԾԵՐՈՒՆ

ՄԱՆԿ · — Ի՞նչ է ան պարոն Ծերուն :

ԵԵՐ · — Պ. պատուելի , գործ մը ունիմ , որոյ համար ձեր խրատին կարօտ եմ , (ՄԵԿՐԱՅ) Համար աղէկ է , ասիկայ մարդ մտիկ կ'ընէ կոր :

ՄԱՆԿ · — Պարոն ծերուն , փոխեցէք եթէ հաճոյ թուի ձեղ այդ կերպ խօսիլը . մեր փիլիսոփայութիւնը կը պատուիրէ որ վճռաբար բան մը չզրուցենք , այլ ամեն բանի վրայ տարակուսով խօսինք , և մեր գատողութիւնը միշտ 'ի կախ ձգենք , ուստի որ ետք չէ որ ըսեռ եկայ՝ հապա կարծեմ թէ եկայ :

ԵԵՐ · — (ԶԱՐԺԱՆՅԵ) կարծեմ մի :

ՄԱՆԿ · — Այո :

ԵԵՐ · — Տէր ողորմեա , ի հարկէ պէտք է կարծեմ , որովհետեւ անանկ է :

ՄԱՆԿ · — Այտիէ ատ չելէր , կընայ ըլլալ որ դուն անանկ կարծես և անանկ եղած չըլլայ :

ԵԵՐ · — Ի՞նչ ըսիր , հիմա ես հոս չեմ :

ՄԱՆԿ · — Հաւասարի չէ , պէտք է որ ամեն բանի վրայ տարակուսինք :

ԾԵՐ · — ԵՇԻՄԱ ինծի հետ չբա խօսիր կոր :
ՄԱՆԿ · — ինծի անանկ կերեւայ թէ հոս
ես , և կարծեմ թէ կը խօսիմ կոր հետդ ,
բայց ով գիտէ թէ անանկ է :

ԾԵՐ · — ԵՇ կռօղ , ծաղր կլնես կոր զիս , ա-
հա ես ահա դուն , կարծեմն ի՞նչ է . մէկդի
թող սցդ բծախնդրութիւնները , մեր գործին
նայինք : Ես կարգուելու փափաք ունիմ :

ՄԱՆԿ · — Զիյտեմ որ ըսեմ :

ԾԵՐ · — Կ'ըսեմ կոր ահա :

ՄԱՆԿ · — Կրնայ ըլլալ :

ԾԵՐ · — Առնելիք աղջիկս աղւոր ու առոյգ է :

ՄԱՆԿ · — Անկարելի բան չէ :

ԾԵՐ · — կարգըլիմ նէ աղէկ պիտի ընեմ :

ՄԱՆԿ · — կամ աղէկ կամ գէշ :

ԾԵՐ · — (ՄԵԿՆԵԴ) Առ քեզի ուրիշ նուագա-
րան մը . (Բարձր) Սա կը հարցնեմ թէ ան աղ-
ջիկը առնելու ըլլամ նէ աղէկ կ'ըլլայ :

ՄԱՆԿ · Ո՞վ գիտէ ինտո՞ր կ'ըլլայ :

ԾԵՐ · — ԳԷՇ կ'ըլլայ արդեօք :

ՄԱՆԿ · — Բանը գիտէ :

ԾԵՐ · — Հոգիդ սիրես չնորհ քով պատաժանէ :

ՄԱՆԿ · — իմ գիտաւորութիւնս ալ ան է :

ԾԵՐ · — Սիրտս սիրած է այն աղջիկը :

ՄԱՆԿ · — Կրնայ ըլլալ :

ԾԵՐ · — Հայրն ալ կուտայ կոր :

ՄԱՆԿ · — Զըլլալիք բան չէ :

ԵԵՐ · — Բայց առնելու ըլլամ նէ կը վախսամ որ գլխուս բան մը չ'բուսցունէ :

ՄԱՆԿ · — Ա. Յ. Դ. ալ կընայ ըլլալ :

ԵԵՐ · — Դուն ինչ կ'ըսես :

ՄԱՆԿ · — Ես անկարելի է չեմ ըսեր :

ԵԵՐ · — Դուն իմ տեղս ըլլայիր ինչ կ'ընէիր · ինչ խրատ կուտաս որ ընեմ :

ՄԱՆԿ · — Ի՞նչ գիտնամ · ինչ որ կ'ուզես :

ԵԵՐ · — Կը կատղիմ կոր :

ՄԱՆԿ · — Ես անպարտ եմ :

ԵԵՐ · — Ես հիմայ քու ձայնդ փոխել կուտամ, Պ. վիլխոսփայ : (Մանկանքը կը գեծէ) :

ՄԱՆԿ · — Վ. Ռ. Վ. Վ. Վ. այ, այ :

ԵԵՐ · — Առիթ մի փիլխոսփայութիւնդ :

ՄԱՆԿ · — Ատ ինչ է · չես ամշնար · ինձի պէս փիլխոսփան ծեծել կը յանդգնիս :

ԵԵՐ · — Պ. վիլխոսփայ, փոխեցէք եթէ կը կամիք այդ կերպ խօսիլը, ամեն բանի վրայ տարակուսելու է · պէտք չէ որ ըսես թէ ծեծեցի քեզ · այլ կը կարծես թէ ծեծեցի քեզ :

ՄԱՆԿ · — Հիմա պիտի երթամ բողոքեմ :

ԵԵՐ · — Անպարտ եմ ես :

ՄԱՆԿ · — Նշաննելը դրած են :

ԵԵՐ · — Կընայ ըլլալ :

ՄԱՆԿ · — Դուն ես զիս ասանկ ընողը :

ԵԵՐ · — Անկարելի բան չէ :

ՄԱՆԿ · — Պիտի գատապարտուիս :

ԾԵՐ · — Ո՞Վ ԳԻՄԷ , ԲՇՆՀ ԿՌԱՎԱՅ .

ՄԱՆԿ · — ԿԵՋԻՐ ԳՈւ (ԿԵՐԵԱ) :

ԾԵՐ · — (ՄՔՆԱԿ) Այս ԲՇՆՀ Է այս , աս գարշելի մարդուն բերնէն ալ հաստատ խօսք մը չկրցի առնուլ , նոր բան մը չ'սորվեցայ , ԲՇՆՀ ընեմ չկյտեմ , անճրկեր մնացեր եմ գլխուս գալիքին վրայ , ինծի չափ ալ շուարած մարդեղած է արդեօք . բայց ահա գնչուները կուգան , բաղդս նայել տամ սրվոնց :

(ԳՆԱՍ+ ՏՊԱԿՆ ԵՐՔԵԼՉՆ)

«Պարոն Ծերուն տի կարգըվի ;

Եկէք ուտենք հերիսա ,

Զեռքըն անոր՝ Ռուրէնիկին

Տայ սրտիկը Տօռիձա .

Նա վարդ մի է դեռ նոր բացուած

Ո՞վ չի սիրեր զայն հիմա ,

Պարոն Ծերուն թող զայն ջրէ՝

Անցնող դարձող հոտուլսա : »

ԾԵՐ · — Իս նայեցէք , բաղդըս կը նայիք :

Ա · ԳՆՉ · — Հապա՞ , ձեռքդ մեզի տուր , մէջն ալ փարա մը , բաղդդ ալ կը նայինք ֆալդ ալ :

ԾԵՐ · — Առէք , ահա երկուքն ալ :

Ա · ԳՆՉ · — Այլոր դէմք մը ունիս , աղւոր :

Բ · ԳՆՉ · — Որ կըսէ թէ բան մը պիտի ըլլաս :

Ա · ԳՆՉ · — Քիչ ատենէն պիտի կարգվիս պարոն , աղւոր կին մը պիտի առնես :

Բ · ԳՆՉ · — Այս , կնիկ մը զոր ամեն մարդ պիտի շոյէ , ամեն մարդ պիտի սիրէ :

Ա. ԳԵԶ · — Կին մը որ քեզի բարեկամներ
պիտի բերէ , և տունդ բարիքներով լեցնէ :

Բ. ԳԵԶ · — Անով մեծ անուն պիտի հանես :

Գ. ԳԵԶ · — Ամենը քեզ մատով պիտի ցուցնեն :

ԾԵՐ · — Աղէկ , բայց ես ինչ կըլլամ :

Բ. ԳԵԶ · — Դժուն . կաւառ , այս , այս (Ե- և
այլքն «դուռ կաւառ» Քութէլ , յեռոյ Քնին)

ԾԵՐ · — (Մինակ) կռողը տանի ասոնք , թըշ-
ուառականները զիս տարակուսանքի մէջ թո-
ղուցին . պէտք է որ սա ամուսնութեանս տա-
կէն ինչ ելլելիքը գիտնամ աղէկ մը , երթամ
նա մեծ մարդը գտնեմ որ բոլոր աշխարհ.ք
կը գովիէ , և որ իր զարմանալի արհեատովը
մարդուս ուզածը ցոյց կուտայ , բայց ինչո՞ւս
պէտք , ահա ուզածս կը տեսնեմ կոր :

ՏԵՍԻԼ Է.

ՏՕԹԻՉԱՆ , ՌՈՒԲԵՆԻԿ . ԾԵՐՈՒՆ .

(Տօրէն և Ռուբէնիկ հիշյ կենան առանց
վԾերուն պետիուն)

ՌՈՒԲ · — Ի՞նչ . Տօրիձաս , կատակ է արդեօք :

ՏՕՐ · — Ի՞նչ կատակ :

ՌՈՒԲ · — Ճշմարիտ է որ կը կարգըվիս :

ՏՕՐ · — Այս , ճշմարիտ է :

ՌՈՒԲ · — Բայց հարսնիքդ երբ է :

ՏՕՐ · — Այս իրիկուն , անպատճառ :

ՌՈՒԲ · — Ուրեմն անգութ , կը մոռնամ քու
վրադ ունեցած սէրս և խոստմունքդ :

ՏՕՐ · — Ամենեւին , ես միշտ նոյն աչքով
կը նայիմ քեղի , և պէտք չէ որ վրդովիս այս
ամուսնութեան համար . սիրելուս չէ որ կառ-
նեմ այդ մարդը այլ ստակին համար . ես չու-
նիմ ստակ , դուն ալ չունիս , ինչ ընենք ա-
սանկով , ես այս մարդը առի որպէս զի վեց
ամիսէն դու ալ ստակ ունենաս ես ալ , վեց
ամիսէն մեռած առ ինձմէ . (Յանկարձ Ծերուանք կը
ունակ) ՄԵՆՔ ալ քու վրադ կը խօսէինք պարոն:
ՌՈՒԲ · — (Տօռէյայն) Այս պարոննն է ըսածդ :

ՏՕՐ · — Հրամմել էք :

ՌՈՒԲ · — (Ծերուանք) Հաճեցէք պարոն իմ
չնորհակալութիւններս ընդունիլ ձեր ամուս-
նանալուն առթիւ , նաև իմ ամենախոնարհ
ծառայութիւններս , իրաւոր շատ համեստ կնոջ
մը կ'իյնաք կոր , (Տօռէյայն) Եւ դուք օրիորդ ,
ուրախացէք ասանկ պարոն մը առնելնուդ
համար . ասկէ աղէկը չպիտի գտնէիք , պա-
րոնին վրայէն կերեւայ որ աղէկ էրիկ մ'է .
(Ծերուանք) Այսուհետեւ ձեր բարեկամն եմ :

ՏՕՐ · — Շնորհակալ ենք , հիմա երթանք .
Ետքը երկար բարակ կը տեսնուինք : (Կերնան)

ԾԵՐ · — (Միան) Ալքոլորովին զզուեցայ կար-
գուելէն , կարծեմ գէշ չեմ ըներ թէ որ եր-
թամիօսքս ետ առնեմ . քիչ մը ստակս գնաց
ալնէ՝ հոդ չէ , թող ստակս վրայ երթայ և
այս անճոռնի կապէն ազատիմ , երթամաղչկան

Հայրը տեսնեմ: (Ո՞ւդիմունքն բուռուց կը տէք) :

ԱՆԴ · — (Պապուսհանէն) Օ՛ փեսաս , դուն ես :

ԾԵՐ · — Ծառայ եմ պարոն :

ԱՆԴ · — Հարսնիքը ընելու համար եկար :

ԾԵՐ · — Զէ՛ , թողութիւն կ'ընես :

ԱՆԴ · — Ես քեզմէ աւելի կ'ուզեմ որ ժամ
մը առաջ ըլլայ :

ԾԵՐ · — Ես ուրիշ բանի համար եկայ հոս :

ԱՆԴ · — Արդէն ամեն բան պատրաստ է :

ԾԵՐ · — Խնդիրը ատոր վրայ չէ :

ԱՆԴ · Խնջոյքը պատրաստ , աղջիկս ալ հագ-
ուած սգուած քեզի կ'սպասէ :

ԾԵՐ · — Ես ատոր համար չեկայ :

ԱՆԴ · — Ալ դոհ պիտի ըլլաս , զի ատենը
մօտեցաւ , ուստի շուտովներս հրամմէ փեսաս :

ԾԵՐ · — Զեզի պղտիկ խօսք մ'ունիմ ըսելիք :

ԱՆԴ · — Շատ մի կոտրտվիր , շուտ մտիր :

ԾԵՐ · — Զէ պարոն , ձեզի խօսելիք ունիմ :

ԱՆԴ · — Խօսելիք ունիս մի , կեցիր , (Գայ) :

ԾԵՐ · — Քսելիքս սա է որ ես հրամանոցդ
աղջիկը ինձի կին առնել ուզեցի , հրամանքդ
ալ մէկ խօսքով հաճեցար տալու . բայց մըտ-
մըտացի որ ես իրեն համար քիչ մը աւելի
տարիքոտ եմ , իր գործին չեմ գար :

ԱՆԴ · — Ընդ հակառակն աղջիկս եւելօք
հաւած է քեզի . աղէկ գլուտեմ որ քեզմով
երջանիկ պիտի ըլլայ :

ԾԵՐ · — ԶԵ պարոնս չէ , ես արտառոց բա-
ներ ունիմ մարմնոյս վրայ :

ԱՆԴ · — Աղջիկս բարեհամբոյը է . դու ալ
պիտի տեսնես որ աղջկ պիտի վարվի հետդ :

ԾԵՐ · — Ես ՞վ ան ով . կարելի բան չէ :

ԱՆԴ · — Այդ ինչ խօսք է :

ԾԵՐ · — Վերջին խօսքս ըստմ քեզի . շատ
աղջկ կընես թէ որ աղջիկդ ինծի չտաս :

ԱՆԴ · — Խելքիդ է եկեր փեսայ . ես կը
մեռնիմ խօսքս ետ չեմ առներ :

ԾԵՐ · — ՏԵՇ ողորմեա , մեռնելու ինչ կայ :

ԱՆԴ · — Ես աղջիկս քեզնէ զատ ուրիշին
չեմ ուզեր տալ :

ԾԵՐ · — Պարոն , շատ չնորհակալ եմ այդ
մարդասիրութենէդ , բայց ես քեզի բացար-
ձակ կը զուրցեմ որ չեմ ուզեր կարդըվիլ :

ԱՆԴ · — Ո՞վ , դ՞ուն , բայց նայէ քեզի բան
մըսեմ պարոն , կամքերը ազատ են , ես ամե-
նեւին մարդէ չեմ վախնար . դուն ինծի հաս-
տատ խօսք տուիր աղջիկս առնելու և ասոր
համար ամեն բան պատրաստեցինք . և որով-
հետեւ հիմա ալ խօսքդ ետ առնել կ'ուզես՝
երթամնայիմ ի՞նչ պէտք է ընել . (Կ'երեայ) :

ԾԵՐ · — (ՄՔՆԱԿ) ԶԵ կարծեր որ ասանկ
դիւրութեամբ խօսք պիտի հասկնայ , յիրաւի-
քանի որ կը մոտածեմ , կը նայիմ որ մեծ խե-
լացութիւն էր այս գործին մէջէն սըկըթիկս ,
քիչ մնաց բան մը պիտի ընէի որ բոլոր կեան-
քիս մէջ զղայի , ահա տղան ալ կուգայ կոր
պատասխան բերելու :

ՏԵՍԻԼ Թ.

ԿՈՄԻՏԱՍԸ, ԾԵՐՈՒԻՆ

ԿՈՄԻՏ · — (ՄԵՂՅ ՅԱՅՆԱՂ) ԾԱռան եմ պարո՞ն :
 ԾԵՐ · — Եւ ես ձեր ծառայն պարո՞ն :
 ԿՈՄԻՏ · — Հայրս ըստ որ տուած խօսքդ
 ետ առեր ես, անանկ չէ :

ԾԵՐ · — Այս պարոն, ցաւօք որտի, բայց . . .
 ԿՈՄԻ · — Հոգ չէ, (ԵՐԻՌ ԱՆՆԻ ԽԵՐԻԱՅՄՑՆԵՂՆ)՝
 Սա երկու սուրերէն մէկը ընտրեցէք :
 ԾԵՐ · — Աս երկու սուրերէն մի :

ԿՈՄԻ · — Բանի որ քոյրս առնելու համար
 տուած խոստումդ կը դրժես, կարծեմ ընելիք
 քաղաքավարութիւնս ալ գէշ չպիտի գտնես :

ԾԵՐ · — Ի՞նչ ըսել կ'ուզես :
 ԿՈՄԻ · — Եթէ ուրիշ մ'ըլլար իմ տեղս՝
 կը զայրանար, բայց ես անուշութեամբ կ'ուզեմ
 լնջնել. պէտք է որ իրարու վիզ կտրենք :

ԾԵՐ · — Եիտակը աղէկ քաղաքավարութիւն :
 ԿՈՄԻ · — Եուտ ըրէք պարոն, ընտրեցէք :
 ԾԵՐ · — Ձեր ոսքին հողաթափն եմ, ես
 կտրելու վիզ չունիմ. (ՄԵՒՐԱԿ) Այս ի՞նչ ան-
 ձոռնի խօսուածք է :

ԿՈՄԻ · — Պարոն, պէտք է որ մենամարտինք :
 ԾԵՐ · — Է՛յ պարոն, երկան մ'ըներ :
 ԿՈՄԻ · — Եուտ ըրէք պարոն, շուտ :
 ԾԵՐ · — Ձեմ ուզեր կ'ըսեմ քեզի :
 ԿՈՄԻ · — Ձե՞ս ուզեր ծեծկըփիլ :
 ԾԵՐ · — Ձէ ըսի ա՛, այս ի՞նչ է :
 ԿՈՄԻ · — Իրա՞ւ կ'ըսես. (ԾԵՐԱՆ ՁԵՇԵԾՆ ԵՐ-
 Ք) Հիմա պարո՞ն, գանգատելու տեղ չունիք,

և կը տեսնէք որ ամեն բան չնորհքով կ'ը-
նեմ. գուն տուած խօսքդ չբռնեցիր, ես ալ
քեզի հետ ծեծկըվիլ ուզեցի, չուզեցիր ծեծ-
կըվիլ, ես ալ զքեզ ծեծեցի, ըսել է որ քա-
ղաքալարութեան դէմ բան չըրի:

ԾԵՐ · — (ՄԵԿ) ի՞նչ սատանայ մարդ է եղեր:

ԿՈՄԻ · — (Սուրբ Ներկայացնելու) Հրամմէ պա-
րոն, ականջդ քաշելու մի պարտաւորեր զիս:

ԾԵՐ · — Նորէն սկսանք :

ԿՈՄԻ · — Ես մարդու վրայ չեմ բռնանար,
կամ պիտի զարնուիք կամ պիտի կարգըվիք :

ԾԵՐ · — Ոչ մէկը կրնամ ընել և ոչ միւսը :

ԿՈՄԻ · — Իրան կ'ըսես :

ԾԵՐ · — Այն իրաւ :

ԿՈՄԻ · — Ուրեմններեցէք (Նորէն կ'ակա ձեւել):

ԾԵՐ · — Այ, այ, այ, կեցիր, կեցիր, կը
կարգըվիմ, կը կարգըվիմ:

ԿՈՄԻ · — Ե՛ն պարոն, ուրախ եմ որ խելքդ
գլուխդ եկաւ, ամեն բան քաղցրութեամբ
լմնցաւ, երթամ իմաց տամ (Հօրբ Շուշը լորնէ):

ՏԵՍԻԼ Ժ.

ԱՆԴԻՄՈՍ, ՏՕՒԻՉԱ, ԿՈՄԻՏԱՍ ԵՒ ԾԵՐՈՒՆ

ԿՈՄԻՑ · — Հայր, պարոնին խելքը գլուխը
եկաւ, ամեն բան չէնք չնորհք պիտի լմնցունէ:

ԱՆԴ · — Պարոն, ահա աղջկանս ձեռքը,
օրհնեալ է Աստուած. վերջապէս բեռը նե-
տեցի վրայէս. ալ ասկէ ետքը քեզի կ'ինայ
անոր հոգը: Ուրեմն երթանք ուրախանանք և
այս երջանիկ ամուսնութիւնը տօնախմբենք:

(Գնալու+ թեկի՞ է յեւէն հրանեն Երեւել)

«Երկու խելօք մէկ փարայի , ինչո՞ւ բերին մեզ
հուսա ,
Յատկէ քուրիկ օ՞ն քեզ տեսնեմ , ծեր մը կայներ,
ո՞վ է սա ,
Հօփ հօփ ընենք վեր ցատկուտենք , կապիկներու
պէս հուսա ,
Մեզ նայի ծերն ու մոմտայ , Փինո Փինո կաց
սուստա ,
Յատկէ քուրիկ պօյըդ սիրեմ , Ծերունն է սա սա ,
ի՞նչ կը նայի խոլոռ խոլոռ , պօյըխներուն հիս-
սասսա՛ :

(Դիւրասանաց Երեւ)


«Պարոն Ծերունը սլիտի կարգենք , տղաք գո-
չենք հէլէսա՛ ,
Տունը տեղէն վեր վերցունենք , քաշենք տա-
նինք հիսասսա ,
Գլուխ գլմի քեզ տի կապենք , փեսայ ընենք սա-
եալսա ,
Տըմիօշ տըմիօշ ի՞նչ կը նայիս , ծեծ մը քաշենք
քեզ հիմա :
Չորս դին դարձեր ու կը նայի , պսակ կ'ուզէ ,
հա՞ հա՞ հա՞ ,
Վայնի վրանդ պարոն Ծերուն , ձիւներ գլխուդ
պիտի գայ ,
Գլխուդ քիւլահ անցունելով պիտի պոռան հիս-
սասսա՛ :

(Ծերանէն Երեւ)

Ասկէ ետքը միտքս դրի՝ պիտի սիրեմ ես ալ սա՛ :

Զգի վարագոյրն

Վերջ Ա. ՀԱՅՈՐՈՅՑ ՀՆՉՈՒԿԻ



Գ Ա Յ Ա Ն Ք



ՀՆՉԱԿ՝ ՏԵՏՐ Ա. ՏԵՏՐ ՏԻՐԱՏՐԱԿՈՒԵԼՈՎ՝ 12
ՏԵՏՐԻ ՄԵԼ յաւելուածով հատու մը կը կազմէ :

Հատորի բաժանորդագինն է 10 դիկն. կանխիկ:
Հատորի սպազրութիւնն ամբողջանալ: ԵՏՔՐ 15 դի.
Գաւառաց համար բղբատարի ծախսն է 2 դի.
ԶԵԽԸ առնողին համար ՏԵՏՐԱԿԻՆ գինն է 50 դրյ.
ԶԵԽԸ առնողին համար ՅԱՅԵԼՈՒԱԾԻՆ գինն է 3 դի.



Հ Ա Ս Ց Է

استانبوله باب عالی جاده سنده ٤٦ نومروی آراكل افندي
كتخانه سنده (خچاق) محرر لکنه

Ա. Խմբագրութիւն ՀՆՉԱԿԻ

Կ. Պոլիս Պապը Ա.լի ճամսէսի թիւ 46 ի Գրա-
վանառատուն Մեծ. Առաքել Եֆէնիի Թօղիսան :

մարգ نظارت چلیلەستنک ٩٥٥ نومروی و خصتنامه سیله طبع او լուշدر